



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան

« 18 » 05 2026թ № 1404Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԵՐՄԱՏՆԱՅԻՆ

**ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 4-ի N 1742-Ն որոշման N1 հավելվածի 7-րդ կետի 6-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի N 1284-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Սահմանել «Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում նպատակային մոնիթորինգի իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի փետրվարի 19-ի Ծրագրի շրջանակում միջանկյալ և նպատակային մոնիթորինգների իրականացման կարգը և ձևերը հաստատելու մասին» N 631-Լ հրամանը:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկի աշխատանքները համակարգող Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալին:

5/18/2026



ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ
պարտականությունները կատարող

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է ՀՀ Կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի N 1284-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) 16-րդ կետով սահմանված միջանկյալ և նպատակային մոնիթորինգների իրականացումը:
2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) մոնիթորինգի բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից տնտեսություններ այցելությունների և տեղանքի ուսումնասիրության միջոցով (այսուհետ՝ Մոնիթորինգ):
3. Վարկի տրամադրումից հետո Հիմնարկի կողմից՝ մեկ տարվա ընթացքում իրականացվում է միջանկյալ մոնիթորինգ՝ Ծրագրի շահառուի տնտեսություն այցի միջոցով, որի արդյունքում կազմվում է արձանագրություն՝ համաձայն N 1 ձևի:
4. Ծրագրի 10-րդ կետի 3-րդ ենթակետում նշված փաստաթղթերը Ծրագրի շահառուի կողմից Նախարարությանը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում իրականացվում է նպատակային մոնիթորինգ՝ Ծրագրի շահառուի տնտեսություն այցի միջոցով, որի արդյունքում կազմվում է արձանագրություն՝ համաձայն N 2 ձևի:
5. Մոնիթորինգի արդյունքում կազմվում են համապատասխան արձանագրություններ՝ համաձայն հաստատված N 1 ձև-ի և N 2 ձև-ի: Միջանկյալ մոնիթորինգի արձանագրության մեջ արտացոլված է լինում ջերմատան կարգավիճակը/կառուցման ընթացքը, իսկ նպատակային մոնիթորինգի

արձանագրության մեջ արտացոլված է լինում փաստացի կառուցված ջերմատան համապատասխանությունը Ծրագրի Աղյուսակ N 1-ի պահանջներին:

6. Եթե Ծրագրի շահառուն չի ապահովում իր տնտեսությունում այցելության միջոցով մոնիթորինգի իրականացումը, ապա մոնիթորինգ չի իրականացվում և այդ մասին գրությամբ տեղեկացվում է Նախարարությանը, որից հետո վերջինս Ծրագրի շահառուին ծանուցում է ողջամիտ ժամկետներում (առավելագույնը 30 օրացուցային օր) մոնիթորինգի իրականացումը ապահովելու նպատակով, որից հետո կրկին Նախարարության կողմից Հիմնարկին հանձնարարվում է իրականացնել մոնիթորինգ: Ծրագրի շահառուի կողմից երկրորդ անգամ մոնիթորինգի իրականացումը չապահովելու պարագայում, Ծրագրի շահառուին ծանուցվում է 15 օրացուցային օրվա ընթացքում ապահովելու մոնիթորինգի իրականացումը: Ծրագրի շահառուի կողմից մոնիթորինգի իրականացումը վերոնշյալ երկու հանգամանքներով չապահովելու պարագայում, մոնիթորինգ կարող է իրականացվել առանց Ծրագրի շահառուի մասնակցության:

7. Միջանկյալ ու նպատակային մոնիթորինգն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

1) Ծրագրի շրջանակում վարկի տրամադրումից հետո մեկ տարվա ընթացքում Նախարարության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) վարկառուի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը համապատասխան գրությամբ ներկայացնում է Նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը, որով վերջինս հանձնարարում է Հիմնարկին՝ իրականացնել միջանկյալ մոնիթորինգ և ներկայացնել համապատասխան տեղեկատվություն:

2) Ծրագրի 10-րդ կետի 3-րդ ենթակետում նշված փաստաթղթերը վարկառուի կողմից Նախարարությանը ներկայացնելուց հետո Վարչությունը ամփոփում է ստացված տեղեկատվությունը և համապատասխան գրությամբ ներկայացնում է Նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը, որով վերջինս

հանձնարարում է Հիմնարկին՝ իրականացնել նպատակային մոնիթորինգ և ներկայացնել համապատասխան տեղեկատվություն:

3) Յուրաքանչյուր միջանկյալ և նպատակային մոնիթորինգի ավարտին կազմված արձանագրությունները՝ կից լուսանկարներով, ներկայացվում են Վարչությանը:

8. Նախարարության գրավոր հանձնարարականով կարող է իրականացվել լրացուցիչ միջանկյալ և/կամ նպատակային մոնիթորինգ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում կառուցման ընթացքում գտնվող ջերմատան միջանկյալ մոնիթորինգ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկի մոնիթորինգի բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից Ծրագրի շահառու _____-ի ՀՀ _____ մարզի _____ համայնքի _____ բնակավայրում կառուցվող ջերմատնային տնտեսությունում իրականացվել է միջանկյալ մոնիթորինգ.

Կառուցվող ջերմատան մակերեսը (հա)	Կառուցվող ջերմատների քանակը (հատ)	Կառուցապատող ընկերության անվանումը (կապալառու)	Կառուցման աշխատանքների մեկնարկի ամսաթիվ և տարեթիվ	Վարկատու ՖԿ-ի անվանումը

Կառուցվող ջերմատան արտադրական չափերն են՝ ընդամենը _____մ², երկարություն՝ _____ մետր, լայնություն _____ մետր
Անշարժ գույքի(երի) սեփականության կամ հողամասի կառուցապատման իրավունքի պետական գրանցման վկայականի(երի) կադաստրային ծածկագրերի համարները՝

Հ/Հ	Ջերմատնային տնտեսության ֆիզիկական վիճակ	Կագավիճակ (կառուցապատման ընթացք) <ul style="list-style-type: none"> • Կառուցված է՝ համապատասխանում է • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ 	Մեկնաբանություն
1.	Կոնստրուկցիա		
1.1	<p>Ջերմատան չափեր՝</p> <p>Նվազագույն կողային բարձրությունը մինչև ջրհորդանը՝ 4.0 մ:</p>	<ul style="list-style-type: none"> • Կառուցված է • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ 	
1.2	<p>Ջերմատան չափեր՝</p> <p>Ջերմատան յուրաքանչյուր տնակի թոփչքի նվազագույն լայնությունը՝ 8.0 մ:</p>	<ul style="list-style-type: none"> • Կառուցված է • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ 	
1.3	<p>Դիմադրողականություն և ծանրաբեռնվածություն՝</p> <p>Քամու դեմ՝ առնվազն 90 կմ/ժ:</p> <p>Ձյան բեռնվածություն՝ առնվազն 60 կգ/մ²:</p>	<p>Ըստ տեխնիկական կամ ծագման հավաստագրի՝</p> <ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է • Չի համապատասխանում 	
1.4	<p>Մետաղական կոնստրուկցիա՝</p> <p>Մետաղական կոնստրուկցիան և դրա հիմնական բաղադրատարրերը պետք է լինեն գործարանային արտադրության և նոր՝ չժանգոտվող մետաղից կամ ցինկապատ մետաղից՝ տաք մեթոդով առնվազն Z-275</p>	<ul style="list-style-type: none"> • Կառուցված է՝ Ըստ տեխնիկական կամ ծագման հավաստագրի՝ Համապատասխանում է <input type="checkbox"/> 	

	<p>ընթացակարգի, ընդ որում, չի թույլատրվում ժանգոտվող մետաղի պատումը չժանգոտվող նյութով: Կոնստրուկցիան կրող խողովակները պետք է ունենան այնպիսի հաստություն, որը թույլ կտա ունենալ անհրաժեշտ դիմադրողականության և ծանրաբեռնվածության աստիճան՝ ըստ 1.3-րդ կետում նշված պահանջների: Յուրաքանչյուր ջերմատան (բլոկի) կառուցման համար անհրաժեշտ կրող կոնստրուկցիաները պետք է լինեն մեկ արտադրողի արտադրության:</p>	<p>Չի համապատասխանում <input type="checkbox"/></p> <ul style="list-style-type: none"> • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ 	
<p>2.</p>	<p>Ջերմատան ծածկ և կողային պատեր</p>		
<p>2.1</p>	<p>Երկշերտ պոլիէթիլենային թաղանթ՝</p> <ul style="list-style-type: none"> • հաստությունը՝ ստորին շերտ՝ առնվազն 150 միկրոն, վերին շերտ՝ առնվազն 180 միկրոն, • հավելանյութեր՝ ստորին շերտի համար՝ EVA (բարձր առաձգականություն), IR (թերմիկ, ջերմախնայող), AD կամ AF (հակակաթոցային), UV (ուլտրամանուշակագույն ճառագայթման դեմ դիմադրողականություն), վերին շերտի համար՝ EVA (բարձր առաձգականություն), UV (ուլտրամանուշակագույն ճառագայթման դեմ դիմադրողականություն): IR (թերմիկ, ջերմախնայող), AD կամ AF (հակակաթոցային) հավելանյութերը վերին շերտի համար ցանկալի են, բայց ոչ պարտադիր, • հավելանյութերի գործման գործարանային երաշխիք՝ առնվազն 3 սեզոն (30 ամիս): 	<ul style="list-style-type: none"> • Կառուցված է <p>Ըստ տեխնիկական կամ ծագման հավաստագրի՝</p> <p>Համապատասխանում է <input type="checkbox"/></p> <p>Չի համապատասխանում <input type="checkbox"/></p> <ul style="list-style-type: none"> • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ 	
<p>2.2</p>	<p>Այլ՝</p> <p>Կարելի է օգտագործել նաև ապակի, իսկ ջերմատան կողային հատվածներում՝ մինչև ջրհորդանը և ճակատային հատվածներում՝ գործարանային արտադրության նոր, արտադրողի կողմից հավաստագրված, բազմամյա օգտագործման (առնվազն 5 տարի)</p>		

	պոլիկարբոնատ:		
3.	Ջերմատան հիմնական համակարգեր		
3.1*	Ջեռուցման համակարգ՝ Կաթսայատուն՝ ավտոմատ կառավարման համակարգով և ջերմատան ջեռուցման ներքին խողովակաշարային ցանցով:	<ul style="list-style-type: none"> • Կառուցված է • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ 	
3.2	Ոռոգման համակարգ՝ Ոռոգման ավտոմատ պոմպակայանով և ջերմատան կաթիլային ոռոգման ներքին ցանցով:	<ul style="list-style-type: none"> • Կառուցված է • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ 	
3.3	Բույսերի մշակության համակարգ՝ Հենակներով/կախիչներով և այլ աքսետուարներով պլաստմասսայե կամ մետաղյա ջրհորդաններ կամ տարաներ բույսերի աճեցման համար:	<ul style="list-style-type: none"> • Կառուցված է • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ 	
3.4	Օդափոխության համակարգ՝ Ավտոմատ կառավարվող տանիքային օդափոխության համակարգ (պատուհաններ) և հորիզոնական կամ ուղղահայաց օդափոխիչներ:	<ul style="list-style-type: none"> • Կառուցված է • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ 	
3.5**	Մառախլագոյացման համակարգ՝ Բարձր ճնշման ավտոմատ մառախլագոյացման պոմպակայան և ջերմատան ներքին ցանց:	<ul style="list-style-type: none"> • Կառուցված է • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ • Չի կիրառվելու 	
3.6**	Ստվերարկման համակարգ՝ Ավտոմատ կառավարվող համակարգ, մեխանիկական մեխանիզմներով և էներգախնայող և (կամ) ստվերարկող վարագույրներով:	<ul style="list-style-type: none"> • Կառուցված է • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ • Չի կիրառվելու 	
3.7	Ավտոմատ կառավարման համակարգ՝ Ջերմատան կլիմայի ավտոմատ կառավարման	<ul style="list-style-type: none"> • Կառուցված է 	

	համակարգ՝ ծրագրային ապահովմամբ:	<ul style="list-style-type: none"> • Կառուցման ընթացքում է • Կառուցված չէ 	
--	---------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------	--

*Գործող կաթսայատան առկայության դեպքում թույլատրվում է դրա վերազինումը,

**Կախված մշակաբույսից և ջերմատան տեղակայման վայրի կլիմայից՝ համակարգը կարող է չկիրառվել:

Լրացուցիչ մեկնաբանություններ՝

Եզրակացություն՝

- Ջերմատան կառուցումը ընթացքի մեջ է
- Ջերմատունը կառուցված է
- Մոնիթորինգի իրականացման պահին ջերմատան կառուցման աշխատանքներ չէր ընթանում

Շահառուի մեկնաբանություն՝ (մասնավորապես անհամաձայնության վերաբերյալ)

Առդիր՝ Մոնիթորինգի _____ հատ լուսանկար:

Շահառու՝

_____ (Ֆիզիկական անձի անուն ազգանուն կամ իրավաբանական անձի անուն)

_____ (ստորագրություն)

Մոնիթորինգի իրականացնող (ներ)՝

_____ (պաշտոն, անուն ազգանուն)

_____ (ստորագրություն)

_____ (պաշտոն, անուն ազգանուն)

_____ (ստորագրություն)

Բաժնի պետ՝

_____ (անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

Տնօրեն՝

_____ (անուն, ազգանուն)

_____ (Կ.Տ ստորագրություն)

« _____ » _____ 20 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում կառուցված ջերմատան նպատակային մոնիթորինգ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկի մոնիթորինգի բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից Ծրագրի շահառու _____-ի ՀՀ _____ մարզի _____ համայնքի _____ բնակավայրում կառուցված ջերմատնային տնտեսությունում իրականացվել է **նպատակային** մոնիթորինգ.

Կառուցված ջերմատան մակերեսը (հա)	Կառուցված ջերմատների քանակը (հատ)	Կառուցապատող ընկերության անվանումը (կապալառու)	Կառուցապատման աշխատանքների ավարտի ամսաթիվ և տարեթիվ	Վարկատու ՖԿ-ի անվանումը

Կառուցված ջերմատան արտադրական չափերն են՝ ընդամենը _____ մ², երկարություն՝ _____ մետր, լայնություն _____ մետր
 Անշարժ գույքի (երի) սեփականության կամ հողամասի կառուցապատման իրավունքի պետական գրանցման վկայականի (երի) կադաստրային ծածկագրերի համարները՝

Հ/Հ	Ջերմատնային տնտեսության ֆիզիկական վիճակ	Կագավիճակ • Համապատասխանում է • Չի համապատասխանում	Մեկնաբանություն
1.	Կոնստրուկցիա		
1.1	<p>Ջերմատան չափեր՝</p> <p>Նվազագույն կողային բարձրությունը մինչև ջրհորդանը՝ 4.0 մ:</p>	<ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է • Չի համապատասխանում 	
1.2	<p>Ջերմատան չափեր՝</p> <p>Ջերմատան յուրաքանչյուր տնակի թռիչքի նվազագույն լայնությունը՝ 8.0 մ:</p>	<ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է • Չի համապատասխանում 	
1.3	<p>Դիմադրողականություն և ծանրաբեռնվածություն՝</p> <p>Քամու դեմ՝ առնվազն 90 կմ/ժ:</p> <p>Ձյան բեռնվածություն՝ առնվազն 60 կգ/մ²:</p>	<p>Ըստ տեխնիկական կամ ծագման հավաստագրի՝</p> <ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է • Չի համապատասխանում 	
1.4	<p>Մետաղական կոնստրուկցիա՝</p> <p>Մետաղական կոնստրուկցիան և դրա հիմնական բաղադրատարրերը պետք է լինեն գործարանային արտադրության և նոր՝ չժանգոտվող մետաղից կամ ցինկապատ մետաղից՝ տաք մեթոդով առնվազն Z-275 ընթացակարգի, ընդ որում, չի թույլատրվում ժանգոտվող</p>	<p>Ըստ տեխնիկական կամ ծագման հավաստագրի՝</p> <ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է • Չի համապատասխանում 	

	<p>մետաղի պատումը չժանգոտվող նյութով: Կոնստրուկցիան կրող խողովակները պետք է ունենան այնպիսի հաստություն, որը թույլ կտա ունենալ անհրաժեշտ դիմադրողականության և ծանրաբեռնվածության աստիճան՝ ըստ 1.3-րդ կետում նշված պահանջների: Յուրաքանչյուր ջերմատան (բլոկի) կառուցման համար անհրաժեշտ կրող կոնստրուկցիաները պետք է լինեն մեկ արտադրողի արտադրության:</p>		
<p>2.</p>	<p>Ջերմատան ծածկ և կողային պատեր</p>		
<p>2.1</p>	<p>Երկշերտ պոլիէթիլենային թաղանթ՝</p> <p>1) հաստությունը՝ ստորին շերտ՝ առնվազն 150 միկրոն, վերին շերտ՝ առնվազն 180 միկրոն,</p> <p>2) հավելանյութեր՝ ստորին շերտի համար՝ EVA (բարձր առաձգականություն), IR (թերմիկ, ջերմախնայող), AD կամ AF (հակակաթոցային), UV (ուլտրամանուշակագույն ճառագայթման դեմ դիմադրողականություն), վերին շերտի համար՝ EVA (բարձր առաձգականություն), UV (ուլտրամանուշակագույն ճառագայթման դեմ դիմադրողականություն): IR (թերմիկ, ջերմախնայող), AD կամ AF (հակակաթոցային) հավելանյութերը վերին շերտի համար ցանկալի են, բայց ոչ պարտադիր,</p> <p>3) հավելանյութերի գործման գործարանային երաշխիք՝ առնվազն 3 սեզոն (30 ամիս):</p>	<p>Ըստ տեխնիկական կամ ծագման հավաստագրի՝</p> <ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է • Չի համապատասխանում 	
<p>2.2</p>	<p>Այլ՝</p> <p>Կարելի է օգտագործել նաև ապակի, իսկ ջերմատան կողային հատվածներում՝ մինչև ջրհորդանը և ճակատային հատվածներում՝ գործարանային արտադրության նոր, արտադրողի կողմից հավաստագրված, բազմամյա օգտագործման (առնվազն 5 տարի) պոլիկարբոնատ:</p>		
<p>3.</p>	<p>Ջերմատան հիմնական համակարգեր</p>		

3.1*	<p>Ջեռուցման համակարգ՝ Կաթսայատուն՝ ավտոմատ կառավարման համակարգով և ջերմատան ջեռուցման ներքին խողովակաշարային ցանցով:</p>	<ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է <ul style="list-style-type: none"> ա) նոր կառուցվող կաթսայատուն բ) գործող կաթսայատան վերազնիում • Չի համապատասխանում 	
3.2	<p>Ռոռզման համակարգ՝ Ռոռզման ավտոմատ պոմպակայանով և ջերմատան կաթիլային ռոռզման ներքին ցանցով:</p>	<ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է • Չի համապատասխանում 	
3.3	<p>Բույսերի մշակության համակարգ՝ Հենակներով/կախիչներով և այլ աքսեսուարներով պլաստմասսայե կամ մետաղյա ջրհորդաններ կամ տարաներ բույսերի աճեցման համար:</p>	<ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է • Չի համապատասխանում 	
3.4	<p>Օդափոխության համակարգ՝ Ավտոմատ կառավարվող տանիքային օդափոխության համակարգ (պատուհաններ) և հորիզոնական կամ ուղղահայաց օդափոխիչներ:</p>	<ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է • Չի համապատասխանում 	
3.5**	<p>Մառախլագոյացման համակարգ՝ Բարձր ճնշման ավտոմատ մառախլագոյացման պոմպակայան և ջերմատան ներքին ցանց:</p>	<ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է • Չի համապատասխանում • Չի կիրառվել 	
3.6**	<p>Ստվերարկման համակարգ՝ Ավտոմատ կառավարվող համակարգ, մեխանիկական մեխանիզմներով և էներգախնայող և (կամ) ստվերարկող վարագույրներով:</p>	<ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է • Չի համապատասխանում • Չի կիրառվել 	
3.7	<p>Ավտոմատ կառավարման համակարգ՝ Ջերմատան կլիմայի ավտոմատ կառավարման</p>	<ul style="list-style-type: none"> • Համապատասխանում է 	

	համակարգ՝ ծրագրային ապահովմամբ:	<ul style="list-style-type: none"> • Չի համապատասխանում 	
--	---------------------------------	------------------------------------------------------------------------	--

*Գործող կաթսայատան առկայության դեպքում թույլատրվում է դրա վերազինումը,

**Կախված մշակաբույսից և ջերմատան տեղակայման վայրի կլիմայից՝ համակարգը կարող է չկիրառվել:

Լրացուցիչ մեկնաբանություններ՝

Եզրակացություն՝

- Հատկացված վարկային միջոցները օգտագործվել են նպատակային և կառուցվել է Ծրագրի չափորոշիչներին համապատասխան ջերմատնային տնտեսություն
- Հատկացված վարկային միջոցները չեն օգտագործվել նպատակային և կառուցվել է Ծրագրի չափորոշիչներին չհամապատասխանող ջերմատնային տնտեսություն

Շահառուի մեկնաբանություն՝ (մասնավորապես անհամաձայնության վերաբերյալ)

Առդիր՝ Մոնիթորինգի _____ հատ լուսանկար:

Շահառու՝

_____ (Ֆիզիկական անձի անուն ազգանուն կամ իրավաբանական անձի անուն)

_____ (ստորագրություն)

Մոնիթորինգն իրականացնող (ներ)՝

_____ (պաշտոն, անուն ազգանուն)

_____ (ստորագրություն)

_____ (պաշտոն, անուն ազգանուն)

_____ (ստորագրություն)

Բաժնի պետ՝

_____ (անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

Տնօրեն՝

_____ (անուն, ազգանուն)

_____ (Կ.Տ ստորագրություն)